Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 01

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի արտահերթ նիստի

ք. Երևան 25 հունվարի 2024թ.

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Կառավարման խորհրդի նախագահի 2021 թվականի ապրիլի 2-ի թիվ 05-Լ որոշմամբ հաստատված աշխատակարգի 7-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը և 19-րդ կետը՝ կայացել է Կառավարման խորհրդի արտահերթ նիստ՝ հեռակա քվեարկության միջոցով:

Համաձայն Կառավարման խորհրդի նախագահի 2021 թվականի ապրիլի 2-ի N 05-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ կետի՝ Կառավարման խորհրդի նիստերն իրավազոր են, եթե այդ նիստերին մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ից ավելին:

Մասնակցում են (Կառավարման խորհրդի անդամներ)՝

Հակոբ Սիմիդյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Գնել Սանոսյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Արմեն Դանիելյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Արմենուհի Հարությունյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Բարդուխ Գաբրիելյան	Գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ձկնաբանության լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Շահեն Խաչատրյան	Հայաստանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ռեգիոնալ երկրաբանության և օգտակար հանածոների հետախուզման ամբիոնի վարիչ, երկրաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Բացակայում են՝	
Անի Իսպիրյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Սուրեն Մելիքյան	Մանթաշյանց գործարարների միություն
Յուրիկ Հակոբյան	Հայաստանի երկրաբանների միություն ՀԿ

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության տարեկան հաշվետվությանը հավանություն տալու վերաբերյալ:

(Զեկուցող՝ ԲԸՏՄ ղեկավար Հ. Մարտիրոսյան)

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների կատարողականների գնահատումները հաստատելու վերաբերյալ:

(Զեկուցող՝ ԲԸՏՄ որակի ապահովման վարչության պետ Բ. Նահապետյան)

3. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների հաշվետվություններին հավանություն տալու վերաբերյալ:

(Զեկուցող՝ ԲԸՏՄ որակի ապահովման վարչության պետ Բ. Նահապետյան)

4. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Վայոց ձորի տարածքային բաժնի ավագ իրավախորհրդատուի (ծածկագիրը՝ 67-30.10-Մ4-2), Կոտայքի տարածքային բաժնի ավագ

իրավախորհրդատուի (ծածկագիրը՝ 67-30.7-Մ4-2) և Երևանի տարածքային բաժնի ավագ պետական տեսուչի (ծածկագիրը՝ 67-30.1-Մ4-1) քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում լրացումներ կատարելուն հավանություն տալու վերաբերյալ:

(Զեկուցող՝ ԲԸՏՄ ղեկավար Հ. Մարտիրոսյան)

Կառավարման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության տարեկան հաշվետվությանը:

Կողմ 7, Դեմ 0

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների կատարողականների գնահատումները:

Կողմ 7, Դեմ 0

3. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների հաշվետվություններին:

Կողմ 7, Դեմ 0

4. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Վայոց ձորի տարածքային բաժնի ավագ իրավախորհրդատուի (ծածկագիրը՝ 67-30.10-Մ4-2), Կոտայքի տարածքային բաժնի ավագ իրավախորհրդատուի (ծածկագիրը՝ 67-30.7-Մ4-2) և Երևանի տարածքային բաժնի ավագ պետական տեսուչի (ծածկագիրը՝ 67-30.1-Մ4-1) քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում լրացումներ կատարելուն:

Կողմ 7, Դեմ 0

Կառավարման խորհրդի դիտարկումները.

Կառավարման խորհրդի անդամների կողմից օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ դիտարկումներ չեն ներկայացվել:

Քվեարկությամբ որոշումներն ընդունվել է ձայների պարզ մեծամասնությամբ:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)_____Հ. Սիմիդյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության
վարչության պետ

(խորհրդի քարտուղար) _____Վ. Բարսեղյան